ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

19 ՄԱՅԻՍԻ 2023թ.

ՈՐՈՇՈՒՄ N 38-Ա

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 19-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Վայք համայնքի ավագանու 2023 թվականի մայիսի 19-ի թվով 6-րդ հերթական նիստի օրակարգը հաստատելու մասին:
2.Վայք համայնքի Զառիթափ բնակավայրում գտնվող 0,03194 հա մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին /զեկուցող՝ Ռ.Մկրտչյան/:
3.Վայք համայնքի Վայք քաղաքում գտնվող, համայնքային սեփականության 0.6 հա մակերեսով հողամասը աճուրդային եղանակով օտարելու, վաճառքի մեկնարկային գինն ու պայմանները սահմանելու մասին /զեկուցող՝ Ռ.Մկրտչյան/:
4. Վայք համայնքի Մարտիրոս բնակավայրում գտնվող կաթսայատունը ՀՀ ՊՆ N զորամասին 5 տարի ժամկետով անհատույց հատկացնելու մասին/զեկուցող՝ Ա.Ղազարյան/:
5. Երևան- Երասխ-Գորիս-Իրանի Իսլամական Հանրապետության սահմանի ավտոճանապարհի կմ 142+000-կմ150+700 հատվածի հիմնանորոգման աշխատանքների իրականացմանը խոչնդոտող ծառերի հատման և վաճառքի մասին/զեկուցող՝ Գ.Գևորգյան/:
6. Դրամական օգնություն տրամադրելու մասին /զեկուցող՝ Ն.Հովակիմյան/:
7.Վայք համայնքի ավագանու երրորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը և ժամը սահմանելու մասին /զեկուցող՝ Ա.Ղազարյան/:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Որոշման նախագիծը նախապատրաստեց՝
ԱՆՈՒՇ ՂԱԶԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

19 ՄԱՅԻՍԻ 2023թ.

ՈՐՈՇՈՒՄ N 39

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՋԱՌԻԹԱՓ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0,03194 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 7-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետով, «Քաղաքաշինության մասին» օրենքի 14.3-րդ հոդվածի 9-րդ մասով , Կառավարության 2021 թվականի հունիսի 17-ի «Գյուղատնտեսական նշանակության հողերը ոչ գյուղատնտեսական նշանակության հողերի փոխադրման դեպքերը սահմանելու մասին» N 987-Ն որոշման 9-րդ կետով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Վայք համայնքի Ջառիթափ բնակավայրում գտնվող համայնքային սեփականություն համարվող 0,03194 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության հողամասի (հողատեսքը՝ այլ) նպատակային նշանակությունը փոխել որպես բնակավայրերի (գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատում) նպատակային նշանակության հողերի:
2. Վայք համայնքի ղեկավարին՝ ձեռնարկել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Որոշման նախագիծը նախապատրաստեց
ԱՆՈՒՇ ՂԱՋԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

19 ՄԱՅԻՍԻ 2023թ.

ՈՐՈՇՈՒՄ N 40-Ա

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՅՔ ՔԱՂԱՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ 0.6 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ, ՎԱՃԱՌՔԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի հիման վրա, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածին, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի «գ» ենթակետին և 22-րդ կետին համապատասխան՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Համաձայնություն տալ Վայք համայնքի Վայք քաղաքի Վ.Սարգսյան հասցեում գտնվող համայնքային սեփականություն (վկայական՝ 15052023-10-0007) հանդիսացող 10-003-0024-0349 կադաստրային ծածկագրով հողամասը (նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման, մակերեսը՝ 0,6 հա) աճուրդային եղանակով օտարելու մասին Վայք համայնքի ղեկավարի առաջարկությանը . քաղաքաշինական փաստաթղթերի հաստատման պահից 2(երկու) տարվա ընթացքում բազմաբնակարան շենքեր կառուցելու նպատակով: Հողամասի վաճառքի մեկնարկային գինը սահմանել 11 266 200 (տասնմեկ միլիոն երկու հարյուր վաթսունվեց հազար երկու հարյուր) ՀՀ դրամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Որոշման նախագիծը նախապատրաստեց
ԱՆՈՒՇ ՂԱԶԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

19 ՄԱՅԻՍԻ 2023թ.

ՈՐՈՇՈՒՄ N 41-Ա

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐՏԻՐՈՍ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԿԱԹՍԱՅԱՏՈՒՆԸ ՀՀ ՊՆ N ԶՈՐԱՄԱՍԻՆ 5 ՏԱՐԻ ԺԱՄԿԵՏՈՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի հիման վրա, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 46-րդ, 48-րդ հոդվածներին և 76-րդ հոդվածի 3-րդ մասին, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետին համապատասխան՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Վայք համայնքի Մարտիրոս բնակավայրում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող կաթսայատունը՝ 123,2քմ. տարածքով և 0.026 հա մակերես հողատարածքով, անհատույց օգտագործման հատկացնել ՀՀ ՊՆ N զորամասին:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդող օրվանից:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Որոշման նախագիծը նախապատրաստեց՝
ԱՆՈՒՇ ՂԱԶԱՐՅԱՆ

LIMITED LIABILITY COMPANY
INSTITUTE
"DORPROJECT"

ОБЩЕСТВО С ОГРАНИЧЕННОЙ
ОТВЕТСТВЕННОСТЬЮ
ИНСТИТУТ
"ДОРПРОЕКТ"

ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
«ՃԱՆՆԱԽԱԳԻԾ»
ԻՆՍՏԻՏՈՒՏ

No 05/05-3

"__05__" ____05_____ 2023 թ.

ՀՀ Վայոց ձորի մարզի Վայք
Համայնքի ղեկավար Մ.Մաթևոսյանին

Պատճենը՝ ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարության
Գլխավոր քարտուղար Ա.Երիցյանին

Հարգելի պարոն Մաթևոսյան

Հայտնում ենք, որ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն է դիմել Մ-2-Երևան – Երասխ-Գորիս- Իրանի սահման ավտոճանապարհի կմ 142 + 000 – կմ 150 + 700 հատվածի կապալառու «Վայքի ՃՇՇ» ՓԲԸ-ն՝ տեղեկացնելով, որ ճանապարհի հիմնանորոգման աշխատանքների իրականացմանը խոչընդոտ են հանդիսանում ճանապարհի օտարման գոտում գտնվող մի շարք ծառեր:

Հարկ ենք համարում նշել, որ ճանապարհի նախագիծը մեր կողմից պատրաստվել է նախագծման թույլտվության համաձայն, որը տրվել է Վայքի համայնքի ղեկավարի կողմից: Նախագիծը հետագույմ ևս համաձայնեցվել է համայնքի ղեկավարի հետ, սակայն ծառերի վերաբերյալ առարկություններ չեն ներկայացվել, դրանց մասին նախագծում նշումներ չեն եղել: Ներկայում ծառերը խոչընդոտ են հանդիսանում և ճանապարհաշինական աշխատանքներն իրականացնելու համար անհրաժեշտ է լուծել ծառերի օտարման հարցը:

Ելնելով վերոգրյալից, խնդրում ենք հնարավոր սեղմ ժամկետներում քննարկել ծառերի օտարման հարցը և ձեռնարկել համապատասխան միջոցներ:

Հարգանքով՝

Տնօրեն Դ. Քարտաշյան

Yerevan 375 040, 54B Acharian St.
Երևան 375 040, Աճառյան 54Բ
Ереван 375 040, ул. Ачаряна 54Б
(+ 374 10) 62 88 50, 62 85 60
(+ 374 10) 28 18 23
Ucdorproject@mail.ru

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

19 ՄԱՅԻՍԻ 2023թ.

ՈՐՈՇՈՒՄ N 42-Ա

ԵՐԵՎԱՆ- ԵՐԱՍԽ-ԳՈՐԻՍ-ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԻ ԱՎՏՈՃԱՆԱՊԱՐՀԻ ԿՄ 142+000-ԿՄ150+700 ԿՄ ՀԱՏՎԱԾԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆԸ ԽՈՉԸՆԴՈՏՈՂ ԾԱՌԵՐԻ ՀԱՏՄԱՆ ԵՎ ՎԱՃԱՌՔԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ և 42-րդ կետերի պահանջներով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Թույլատրել Վայք համայնքի տարածքում գտնվող, Երևան-Երասխ-Գորիս-Իրանի Իսլամական Հանրապետության սահմանի ավտոճանապարհի կմ 142+000-կմ150+700 հատվածի հիմնանորոգման աշխատանքների իրականացման ժամանակ ստորին հենապատերի կառուցման աշխատանքներին խոչընդոտ հանդիսացող ծառերի (ուռենի, հացենի, թթենի և տանձենի) հատումը:
2.Սահմանել հատված ծառերի վաճառքի գինը 1խմ-ի համար՝ 25.000(քսանհինգ հազար) ՀՀ դրամ, իսկ միայնակ ծերերին, սոցիալապես անապահով, բազմազավակ(4 և ավելի երեխա ուեցող) և զոհվածների ընտանիքներին հատկացնել անհատույց(մինչև 2 խմ-ի չափով):
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Որոշման նախագիծը նախապատրաստեց՝
ԱՆՈՒՇ ՂԱԶԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

19 ՄԱՅԻՍԻ 2023թ.

ՈՐՈՇՈՒՄ N 43-Ա

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, Վայք համայնքի ավագանու 2022 թվականի մայիսի 13-ի «Վայք համայնքում սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրները լուծելու չափորոշիչները սահմանելու մասին» N 12-Ն որոշմամբ հաստատված կարգով և հիմք ընդունելով Վայք համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական աջակցություն ցուցաբերելու գործընթացն ապահովելու հարցերի մշտական հանձնաժողովի թիվ 4 արձանագրությունը՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Վայք համայնքի 2023 թվականի բյուջեի «Սոցիալապես անապահով անձանց աջակցություն» /4729/ հոդվածից դրամական օգնություն տրամադրել Վայք համայնքի հետևյալ բնակիչներին՝

.Դավիթ Խաչիկի Խաչատրյան՝ 100 000 (հարյուր հազար) ՀՀ դրամ

.Մանվել Հայրիկի Հակոբյան՝ 50 000 (հիսուն հազար) ՀՀ դրամ

.Անահիտ Հայրապետի Դավթյան՝ 30 000 (երեսուն հազար) ՀՀ դրամ

.Լուսինե Ասատուրի Ասատրյան ՝50 000 (հիսուն հազար) ՀՀ դրամ

.Արշալույս Աղվանի Բաբայան ՝100 000 (հարյուր հազար) ՀՀ դրամ

.Նինա Կարլիտոնի Բալյան ՝50 000 (հիսուն հազար) ՀՀ դրամ

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

Որոշման նախագիծը նախապատրաստեց՝
ԱՆՈՒՇ ՂԱԶԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

19 ՄԱՅԻՍԻ 2023թ.

ՈՐՈՇՈՒՄ N 44-Ա

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԵՐՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ԵՎ ԺԱՄԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայք համայնքի ավագանու երրորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օր և ժամ սահմանել 2023 թվականի հունիսի 20–ին, ժամը՝ 15:30–ին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Որոշման նախագիծը նախապատրաստեց՝
ԱՆՈՒՇ ՂԱԶԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՔԻ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ
ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ
ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

REPUBLIC OF ARMENIA
CLOSED JOINT-STOCK COMPANY OF ROAD
BUILDING AND EXPLOITATION OF VAYK

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
ВАЙКСКОЕ ЗАКРЫТОЕ АКЦИОНЕРНОЕ
ОБЩЕСТВО ПО ЭКСПЛУАТАЦИИ И
СТРОИТЕЛЬСТВУ ДОРОГ

3805 Վայոց Ձոր մարզ
Վայք համայնք, Զառիթափ
բնակավայր 23 փողոց 2
հեռ. 0 282 2-25-12
Էլ. փոստ vaykichshsh@mail.ru

3805 Vayots Dzor region
Vayk community, Zaritap
plase of residence 23 street 2
tel. 0 282 2-25-12
E-mail vaykichshsh@mail.ru

3805 Вайоц Дзор область
сообщество Вайк , место
жительства Заритап 23 улица 2
тел. 0 282 2-25-12
Эл. почта vaykichshsh@mail.ru

№ 22

«20 » Ապրիլի 2023թ.

ՀՀ Տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարություն
Գլխավոր քարտուղար՝
Պարոն Ա. Երիցյանին

Հարգելի պարոն Երիցյան,

Հայտնում եմ Ձեզ, որ *«Վայքի ՃՇՇ» ՓԲԸ* -ն **N ՏԿԵՆ-ԲՄԱՇՁԲ-2022/35Ճ-5** պայմանագրի համաձայն, Մ-2, Երևան-Երասխ-Գորիս-Մեղրի-Իրանի սահման միջպետական նշանակության ա/ճ-ի կմ142+000 – կմ150+700 հատվածում պետք է իրականացնի ճանապարհաշինարարական աշխատանքեր: Բայց ստորին հենապատերի կառուցման աշխատանքներում առկա են խոչընդոտ հանդիսացող ծառեր՝ 192 հատ հացենի, 61 հատ ուռենի, 34 հատ թթենի և 2 հատ տանձենի:

Խնդրում եմ Ձեր միջնորդությունը՝ առկա խոչընդոտները վերացնելու համար:

«Վայքի ՃՇՇ» ՓԲԸ տնօրեն՝ *Կ. Գևորգյան*

LIMITED LIABILITY COMPANY
INSTITUTE
"DORPROJECT"

ОБЩЕСТВО С ОГРАНИЧЕННОЙ
ОТВЕТСТВЕННОСТЬЮ
ИНСТИТУТ
"ДОРПРОЕКТ"

ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
«ՃԱՆՆԱԽԱԳԻԾ»
ԻՆՍՏԻՏՈՒՏ

No 05/05-3

"__05__" ____05_____ 2023 թ.

ՀՀ Վայոց ձորի մարզի Վայք
Համայնքի ղեկավար Մ.Մաթևոսյանին

Պատճենը՝ ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարության
Գլխավոր քարտուղար Ա.Երիցյանին

Հարգելի պարոն Մաթևոսյան

Հայտնում ենք, որ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն է դիմել Մ-2-Երևան – Երասխ-Գորիս- Իրանի սահման ավտոճանապարհի կմ 142 + 000 – կմ 150 + 700 հատվածի կապալառու «Վայքի ՃՇՇ» ՓԲԸ-ն՝ տեղեկացնելով, որ ճանապարհի հիմնանորոգման աշխատանքների իրականացմանը խոչընդոտ են հանդիսանում ճանապարհի օտարման գոտում գտնվող մի շարք ծառեր:

Հարկ ենք համարում նշել, որ ճանապարհի նախագիծը մեր կողմից պատրաստվել է նախագծման թույլտվության համաձայն, որը տրվել է Վայքի համայնքի ղեկավարի կողմից: Նախագիծը հետագույմ ևս համաձայնեցվել է համայնքի ղեկավարի հետ, սակայն ծառերի վերաբերյալ առարկություններ չեն ներկայացվել, դրանց մասին նախագծում նշումներ չեն եղել: Ներկայում ծառերը խոչընդոտ են հանդիսանում և ճանապարհաշինական աշխատանքներն իրականացնելու համար անհրաժեշտ է լուծել ծառերի օտարման հարցը:

Ելնելով վերոգրյալից, խնդրում ենք հնարավոր սեղմ ժամկետներում քննարկել ծառերի օտարման հարցը և ձեռնարկել համապատասխան միջոցներ:

Հարգանքով՝

Տնօրեն Դ. Քարտաշյան

Yerevan 375 040, 54B Acharian St.
Երևան 375 040, Աճառյան 54Բ
Ереван 375 040, ул. Ачаряна 54Б
(+ 374 10) 62 88 50, 62 85 60
(+ 374 10) 28 18 23
Llcdorproject@mail.ru